Արձանագրություն N 5
«ՀՀ ՏՋՆՆ-ԳՀԱՊՁԲ-17/1-1» ծածկագրով ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի
(Տնտեսական,սանհիգիենիկ և լվացքի միջոցների մատակարարման)

ք. Երևան

4 հուլիսի 2017թ.
ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի

նախագահ՝ Ա.Գրիգորյան

քարտուղար՝ Գ.Մելիքսեթյան

անդամներ՝ Ա.Մկրտչյան, Գ.Սիմոնյան, Ս.Զորանյան, Վ.Ապրեսյան

1. ԳՀ ընթացակարգի հայտերի հետագա գնահատման մասին

1.1 Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության 2017թ. հուլիսի 3-ի թիվ 03/26-1/12018-17 գրություն-պարզաբանումը, ինչպես «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները, մասնավորապես՝

Եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը: Միաժամանակ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 8-րդ ենթակետով սահմանված է, որ եթե պայմանագրի գինը կայուն է, ապա մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով:

- «Արժեք» և «ԱԱՀ» սյունակները լրացված են միայն թվերով, իսկ «Ընդհանուր գին» սյունակը լրացված է և տառերով և թվերով, ըստ պաշտոնական պարզաբանման՝ այդ մասով մասնակցի հայտը ենթակա չէ մերժման,
- «Արժեք» և «ԱԱՀ» սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված

գումարներից որևէ մեկի հաներագումարը համապատասխանում է «Ընդհանուր գին» սյունակում տառերով նշված գումարին, ըստ պաշտոնական պարզաբանման՝ այդ մասով մասնակցի հայտը ենթակա չէ մերժման,

Հաշվի առնելով վերոգրյալը **հանձնաժողովը որոշեց**.

ա/ Գնահատող հանձնաժողովի սույն թվականի հունիի 21-ի արձանագրություն թիվ 4-ում արձանագրված «Լանկա» ՍՊԸ-ի կողմից Հավելված 5-ով ներկայացված գնային առաջարկի աղյուսակում առկա անհամապատասխանությունները. մասնավորապես՝ 8-րդ, և 11-րդ չափաբաժիններում գնային առաջարկում **«Արժեք»** և **«ԱԱՀ»** սյունակներում թվերով գրվածը չի համապատասխանում տառերով գրվածին, սակայն տառերով գրված թվաբանական հաշվարկը համապատասխանում է **«Ընդհանուր գին»** սյունակում ներկայացված գնային առաջարկին՝ տառերով և թվերով: Հաշվի առնելով վերոգրյալը գնային առաջարկ ընդունել 8-րդ և 11-րդ չափաբաժիններով **«Ընդհանուր գին»** սյունակում ներկայացված գնային առաջարկը:

1. 2 Հիմք ընդունելով ՀՀ Ֆինանսների նախարարության 2017թ. հուլիսի 3-ի թիվ 03/26-1/12018-17 գրություն-պարզաբանումը, ինչպես նաև ՀՀ կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի և 41-րդ կետի պահանջները. մասնավորապես՝

Եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ելնելով վերոգրյալից գնման գործընթացը էլեկտրոնային եղանակով կազմակերպելու դեպքում, եթե ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից՝

- գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ստորագրված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա տվյալ դեպքում մասնակցի հայտը ենթակա է մերժման,
- հայտում ներառվող փաստաթղթերից գնային առաջարկը և հայտի ապահովումը ստորագրված են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ մնացած փաստաթղթերը *էլեկտրոնային թվային ստորագրությամբ ստորագրված չեն*, ապա տվյալ դեպքում մասնակցին պետք է տրվի հնարավորություն շտկելու նշված անհամապատասխանությունը,

հայտի ապահովումը ներկայացված է մեկ ֆայլով և տուժանքի մասին համաձայնագիրը կամ վճարման պահանջագիրը պարունակող էջերից որևէ մեկի վրա առկա է էլեկտրոնային թվային ստորագրությունը, ապա տվյալ դեպքում մասնակցի հայտը ենթակա չէ մերժման: Հակառակ դեպքում, այն է տուժանքի մասին համաձայնագիրը և վճարման պահանջագիրը ներկայացված է տարբեր ֆայլերով և ստորագրված է կամ տուժանքի մասին համաձայնագիրը կամ վճարման պահանջագիրը, ապա տվյալ դեպքում մասնակցի հայտը ենթակա է մերժման:

- ներկայացված վճարման պահանջագիրը լրացված չէ հրավերի պահանջներին համապատասխան, ապա տվյալ դեպքում մասնակցի հայտը ենթակա է մերժման, իսկ եթե տուժանքի մասին համաձայնագրում բացակայում է ամսաթիվը, սակայն տուժանքի մասին համաձայնագրի էլեկտրոնային թվային ստորագրությունը պարունակում է ամսաթիվ, ապա տվյալ դեպքում մասնակցի հայտը ենթակա չէ մերժման:

Հաշվի առնելով վերոգրյալը **հանձնաժողովը որոշեց**.

ա/ Ա/Ձ Հայկ Գալստյանի հայտը գնահատել անբավարար և մերժել, քանի որ վերջինս Հավելված 10 տուժանքի մասին համաձայնագիրը (հայտի ապահովում) և վճարման պահանջագիրը հաստատել է ձեռագիր ստորագրությամբ և թաց կնիքով՝ լինելով ՀՀ ռեզիդենտ:

բ/ «ԼԵՑԿՈԱԼԵՔՍ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել, քանի որ վերջինս Հավելված 10-ի վճարման պահանջագիրը լրացրել է հրավերի պահանջներին ոչ համապատասխան՝ այն է Արժույթը (բառերով և կոդով) տողը թերի է՝ բացակայում է արժույթի կոդը, ինչպես նաև լրացվել է վճարման պահանջագրի ներկայացման ամսաթիվը, ինչը պետք է լրացվի պատվիրատուի կողմից բանկ ներկայացնելիս հայտի ապահովման գումարը վճարելու դեպքում:

գ/ «Սմարթլայն» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել, քանի որ վերջինս Հավելված 10-ի վճարման պահանջագիրը լրացրել է հրավերի պահանջներին ոչ համապատասխան՝ այն է Արժույթը (բառերով և կոդով) տողը թերի է՝ բացակայում է արժույթի կոդը:

դ/ «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել, քանի որ վերջինս Հավելված 10-ի վճարման պահանջագիրը լրացրել է հրավերի պահանջներին ոչ համապատասխան՝ այն է բացակայում է պատվիրատուի կողմից լրացված Շահառուի հաշվի համարը և Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ փոխարենը լրացված են սխալ տվյալներ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

1.3 Հիմք ընդունելով մասնակիցների կողմից ներկայացրած (բավարար գնահատված) գնային առաջարկները՝ հանձնաժողովն **արձանագրեց՝**

ա/ «ՌԵԱՔԻՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած 25-րդ, 37-րդ, «Լայթ Ընդ Մոր» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած 6-րդ, 16-րդ, «Զորաշեն» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած 16-րդ, 17-րդ, 20-րդ, 21-րդ, 30-33րդ, «Լանկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած 2-րդ, 5-րդ, 7-րդ, 8-րդ, 10-րդ, 12-րդ, 20-րդ, 21-րդ և 23-րդ չափաբաժիններով ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

1.4 Հիմք ընդունելով մասնակիցների կողմից ներկայացրած գնային առաջարկները՝ հանձնաժողովը **որոշեց՝**

ա/ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները ... *եթե ոչ գնային պայմաններին բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների կողմից ներկայացրած գնային առաջարկը գերազանցում է այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները, ապա առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստը կասեցվում է և հանձնաժողովի քարտուղարը մեկ աշխատանքային օրվա ընթացքում բավարար գնահատված մասնակիցներին ծանուցում է բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին: Բանակցությունները վարվում են ոչ շուտ քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 2-րդ աշխատանքային օրը):*

Հանձնաժողովն **որոշեց՝ 11.07.2017թ.** ժամը 11:00-ին հանձնաժողովի նիստ հրավիրել՝ **«Զորաշեն» և «Լանկա» ՍՊԸ-ներին** 20-րդ չափաբաժնի համար առաջարկված գնի նվազեցման շուրջ բանակցությունների համար:

Բանակցությունները տեղի կունենան ք. Երևան, Մ.Մկրտչյան 5 հասցեում, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն, 9-րդ հարկ 910 սենյակ:

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Ա. Գրիգորյան

քարտուղար՝ _____ Գ.Մելիքսետյան

անդամներ՝ _____ Ա.Մկրտչյան

_____ Գ. Սիմոնյան

_____ Վ.Նարեկյան

_____ Ա.Հովանյան